

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/6

25 օգոստոսի 2015 թ.

Քննարկվեց ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կարևորագույն օբյեկտների և հիմնարկ ձեռնարկությունների պահպանության գնդի 27.07.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը չկիրառելու վերաբերյալ:

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կարևորագույն օբյեկտների և հիմնարկ ձեռնարկությունների պահպանության գնդի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի մարտի 31-ին էլեկտրոնային հաշվետվությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն է հանձնվել մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի մասով ամսական ամփոփ հաշվարկը, որի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է ծանուցում, այն ընդունված և վավեր լինելու վերաբերյալ:

Եթե էլեկտրոնային հաշվետվությունը չէր համապատասխանում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածին, ապա ծանուցման մեջ պետք է նշված լիներ եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի անհամապատասխան լինելու մասին կամ գոնե հնարավորինս սեղմ ժամկետում գրությամբ նախազգուշացվեր հաշվարկի անվավեր ճանաչվելու մասին:

20.07.2015թ-ին Կենտրոն հարկային տեսչության կողմից էլեկտրոնային եղանակով ստացվել է գրություն, որին ծանոթանալուց անմիջապես հետո 23.07.2015թ-ին ուղարկվել է եկամտային հարկի և սոցիալական վճարի մասով մարտ ամսվա ճշտված ամփոփ հաշվարկը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերանայել և ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ԿՕ և ՀՁՊ գնդի նկատմամբ չկիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, քանի որ սխալ ուղարկված հաշվետվության մասին իրազեկվել է միայն 111 օր անց, որի հետևանքով գնդի նկատմամբ հաշվարկվել են տույժեր և տուգանքներ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կարևորագույն օբյեկտների և հիմնարկ ձեռնարկությունների պահպանության գնդի (այսուհետ նաև գանգատաբեր) կողմից 2015 թ-ի մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը

(այսուհետ նաև Հաշվարկ) ներկայացվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես, 2015 թ-ի մարտ ամվա համար Հաշվարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ 31.03.2015 թ-ին:

Թեև համակարգի կողմից Հաշվարկը համարվել է վավեր, սակայն ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 20.07.2015 թ-ի գրությամբ գանգատաբերին տեղեկացվել է Հաշվարկը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ ներկայացված լինելու մասին: Արդյունքում, Գանգատաբերի կողմից ներկայացված Հաշվարկը դիտվել է չներկայացված, ինչը հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ 2015 թ-ի մարտ ամվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը գանգատաբերի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետից շուտ է ներկայացվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ գանգատաբերի վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են: Մասնավորապես, թեև խախտվել է հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների ընթացակարգը, սակայն դրա արդյունքում պետական բյուջեին վնաս չի պատճառվել, չի թաքցվել հարկվող շրջանառությունը, ինչպես նաև՝ վճարման ենթակա պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կարևորագույն օբյեկտների և հիմնարկ ձեռնարկությունների պահպանության գնդի գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ